Եթէ մենք, թշնամիներով շրջապատուած, որեւէ նշան ցոյց տանք, թէ յարում ենք և կամ աչք ենք ուղղում այդ կարծեցեալ օգնիչներին, այն ժամանակ մեզ ուրիշ բան չի սպասիլ: բայց եթէ նեղութիւն, խոշտանգանք, յափշտակութիւն եւ սուր: Իսկ եթէ մեր դրածն անստոյգ համարես եւ հաճոյական բան ասողներին ականջ դնես, տեղեկացիր ուրիշ վստահելի անձերից, թէ անցեալներում ի՛նչ կրեցին իրենց բռնակալից արցախեցիք, երբ այն հաճոյախօսների վրայ յոյս դրին, եւ ի՛նչպէս մեռաւ Գանձասարի խղճալի Յովհաննէս կաթողիկոսը, եւ ի՛նչպէս քանդուեց Գանձասարի աթոռը, եւ ո՞ւր են այժմ մելիքները եւ ի՛նչ աղէտներ քաշեցին նրանք:

Այդ դառնութիւնների ժամանակ ո՛րքան տեղերից մեզ գովասանք գրեցին, թէ շատ լաւ էր, որ մենք համակրութեան նշան ցոյց չտուինք նրանց եւ մեր սուրը դահը փորձանքներից ազատ պահեցինք:

Այս բոլորն ստուգութեամբ իմանալուց յետոյ՝ զատի՛ր սուտն իրաւից եւ մեղադիր մի՛ լինիր մեզ»:

Դժբախտաբար, արդարացան Ղուկաս կաթողիկոսի կասկածները: Արշաւանքը դէպի Անդրկովկաս կամ աւելի ճիշդ՝ դէպի Հայաստան տեղի չունեցաւ: Այդ օրերին մեռաւ նաեւ Պօտեմկինը, Հայաստանի ազատութեան գլխաւոր հրահրողը:

Եւ հայոց յոյսերը ա՛յս անգամ էլ ի դերեւ ելան:

10·

Պօտեմկինի մահով հայկական դատը սկսեց նորից ձգձգուել, սակայն մէջտեղից չվերացաւ. դեռ տպրում էր ծրագրի միւս պաշտպանը՝ Եկատերինա կայսրուհին:

Պօտեմկինին յաջորդեցին ուրիշ մարդիկ, որոնք նրա ծրագիրներից աւելի համարձակ եւ անիրագործելի ծրագիրներով էին ոգեւորուած: Հասկանալի է, որ այդ ծրագիրների շարքում իր տեղն ունէր նաեւ Հայաստանը:

Այժմ Պլատոն Զուբովն էր Ռուսաստանում ամենաազդեցիկ մարդը, Եկատերինայի միւս մտերիմը: Օդային ծրագիրներ կազմելու կողմից նա ամենեւին յետ չէր մնում իր նախորդից, եւ ուրեմն ազատագրուած Հայաստանի գահը նրա՛ն էլ շատ շահագրգռում էր:

Այդ միջոցին Աղա Մահմուդ խան ներքինին, Պարսկաստանի ներքին խռովութիւնները զսպելով, իրեն թագաւոր էր հրատարակել: 1795 թուին այդ ահարկու մարդը արշաւեց դէպի Ղարաբաղ՝ Իբրահիմ խանին պատժելու համար, որ մերժել էր նրա իշխանութիւնը ճանաչել:

Դեռ Երասխ գետը չանցած՝ մարդիկ ուղարկեց հայոց մելիքներին, որ դան հպատակին իրեն, խոստանալով որ կը վերահաստատի նրանց իրենց վաղեմի իշխանութեան մէջ եւ նրանց թշնամուն՝ Իբրահիմ խանին կ՝ոչնչացնի: Բայց մելիքները, որոնք դեռ յոյս ունէին ռուսների օգնութեամբ իրենց հայրենիքը մահմեդական լծից ազատելու, լաւ համարեցին հաւատարիմ մնալ Ռուսաստանին: Ուստի առժամապէս միաբանեցին իրենց ոխերիմ թշնամի Իբրահիմ խանի հետ եւ քաջութեամբ պաշտպանուեցին Շուշու բերդում:

Խորամանկ Շահը, ժամանակ չկորցնելու համար, անցաւ Վրաստան Հերակլ թագաւորին պատժելու, որ իր երկիրը ռուսաց հովանաւորութեան տակ էր դրել թողնելով, որ յետոյ իր վրէժն առնէ Շուշու բերդականներից: Հերակլը թեթեւ ընդդիմութիւնից յետոյ՝ փախաւ եւ Թիֆլիս մայրաքաղաքը մատնեց պարսից կատաղութեանը: Սրանք երեք օր երեք գիշեր ամէն տեսակ վայրագութիւններ գործեցին եւ 16,000 տղայ եւ աղջիկ, սրանցից 12,000-ը հայ եւ 4000-ը վրացի, գերի տարան Պարսկաստան (Պալասանեան՝ «Հայ. Պատմ.», եր. 682):

Ահա առիթ նոր պատերազմի:

Ու Եկատերինան նոր արշաւանքի ձեռնարկեց ընդդէմ պարսիկների, որի մերձաւոր նպատակն էր հրովարտակի ասելով. «Վերահաստատել Հերակլ թագաւորին իր երկրում, ռուսներից կախուած դիրք տալ Ղարաբաղի հայ մելիքներին եւ նրանց հպատակ բնակիչներին եւ յօգուտ մեր դրաւել Արարատեան Հայրապետին, որ այնքան զօրեղ ազդեցութիւն ունի ամբողջ ցիրուցան հայութեան վրայ: Այս բոլորը շատ դիւրութիւններ կը տար մեզ քրիստոնեաների գլխաւորութիւնը հաստատելու եւ մեր գերագոյն իշխանութիւնն ապահովելու համար»: